

ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ՊԱՐԱԳԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՅՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՀ

Ինչպես հայտնի է, գոյություն ունեն մախադասության անդամների առանձնացման տարբեր սկզբունքներ: Ակադեմիկոս Գ.Բ.Ջահուկյանը «Համընդհանուր լեզվաբանական տեսությունը և մախադասության անդամների ուսմունքը» հոդվածում տարբերակում է 6 սկզբունք: 1) գոյաբանական, 2) գործառական, 3) իմաստաբանական-տրամաբանական, 4) կապակցականության, 5) խոսքիմասային զուգահեռության, 6) արտահայտչամիջոցային տարբերակման [Ջահուկյան, 1989, էջ 13-18]: Նշված սկզբունքներից երկրորդական անդամների, հատկապես պարագաների առանձնացման համար հանդես է գալիս իմաստաբանական-տրամաբանական սկզբունքը, որի մի տարբերակը համարվում է հարցա-կատեգորիական մոտեցումը, «երբ մախադասության անդամների առանձնացումը կատարվում է ըստ համապատասխան հարցական բառերի...» [Ջահուկյան, 1989, էջ 15]:

Ավանդական ըմբռնման համաձայն՝ հայերենում առանձնացվում են պարագաների հետևյալ տեսակները՝ ձևի, տեղի, ժամանակի, պատճառի, նպատակի, չափի, հիմունքի, զիջման կամ հակառակ հիմունքի, միասնության, պայմանի: Դեռ Մ.Աբեղյանը գրում էր, որ «պարագաները, նայելով իրենց նշանակության, սովորաբար բաժանում են հետևյալ տեսակների՝ տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի, հիմունքի և եղանակի պարագաներ»: Ընդ որում, հիմունքի պարագաների թվին նա դասում է պատճառի, նպատակի, պայմանի և զիջման կամ հակառակ հիմունքի պարագաները [Աբեղյան, 1965, էջ 309-311]: Պարագաների տարբերակման հիմնական չափանիշներից է իմաստաբանականը, քանի որ պարագաները բաժանվում են «...ըստ իրենց դրսևորած հիմնական իմաստների [Աբրահամյան, Պառնասյան, Օհանյան, Բաղիկյան, 1976]: Պարագաների որոշումը, ըստ էության, մեծ դժվարություն չի ներկայացնում, քանզի կարելի է գործածել հարցա-կատեգորիական մոտեցումը: Սակայն երբեմն հանդիպում են այնպիսի դեպքերի, երբ այս կամ այն պարագան կարելի է մեկնաբանել երկկերպ, ինչը և դժվարեցնում է նրա

միանշանակ որոշումը: Այսպես, օրինակ, հետևյալ նախադասությունում ընդգծված բառակապակցությունը կարելի է մեկնաբանել, թերևս, թե՛ որպես ձևի, թե՛ որպես ուղևորման պարագա՝

Երանք սկսեցին *ետ ու առաք* շրջել գետի ափերի մոտ: (Բաֆֆի, 329)

Երկինաստությունը բացատրվում է նրանով, որ *ետ ու առաք* բառակապակցությունը, մեր կարծիքով, որքան էլ ըստ իր ընթացածի իմաստի ընկալվի որպես ձևի պարագա, այնուամենայնիվ դրսևորում է ուղևորման պարագայի նշույթ, ինչը վկայակոչում է կապակցության զուտ բառային իմաստը: Ավելորդ չի լինի այստեղ նշել, որ վերը նշված պարագային անգլերենում համապատասխանում է *to and fro* կապակցությունը, որը միանշանակորեն դիտվում է որպես ուղևորման պարագա [օրինակ, Кобринка, Корнеева и др., էջ 78]:

Թերևս որոշակի տարակուսանք է առաջացնում նաև ընդգծված կապակցությունը հետևյալ նախադասությունում՝

Վիճակների համանմանությունը առաջ էր բերել *Նրանց մեջ* փոխադարձ կարեկցություն: (Բաֆֆի, 363)

Երանք մեջ կապակցության շարահյուսական կարգավիճակը որոշելիս՝ տարակուսանքը պայմանավորված է նրանով, որ վերջինս, մեր կարծիքով, կարելի է դիտել թե՛ որպես տեղի պարագա, թե՛ որպես կապով արտահայտված անուղղակի խնդիր: Իհարկե, տեղի պարագայի իմաստը ավելի շատ է դրսևորված, սակայն այն հանգամանքը, որ սույն կապակցության մի բաղադրիչը (*Նրանց*) ցույց է տալիս անձ, այլ ոչ թե տարածք կամ զետեղարան, փոքր-ինչ կասկած է առաջացնում, որ *Նրանց մեջ* կապակցությունը միանշանակորեն դիտվի որպես տեղի պարագա, ինչը և ակնհայտ հակասություն է ստեղծում:

Նման օրինակներ, որտեղ այս կամ այն կապակցությունը հնարավոր է տարբեր ձևով մեկնաբանել, կարելի էր նորից և նորից բերել: Սակայն՝ այստեղ մենք բոլորովին մտադիր չենք լուսաբանել շարահյուսական բազմիմաստության հիմնախնդիրը: Սույն հոդվածում մենք ցանկանում ենք ուշադրությունը բևեռել շարահյուսական մի այլ փաստի վրա, որը կքննվի ստորև: Բանն այն է, որ երբեմն պատահում են նախադասություններ, որտեղ այս կամ այն կապակցությունը դժվար է բնութագրել իբրև հայերենում ավանդաբար ընդունված որևէ մի պարագա, որի հետևանքով տարակուսանք է առաջանում նման կապակ-

ցության շարահյուսական պաշտոնը որոշելիս: Սեր տեսակետը հիմնավորելու նպատակով բերեմք օրինակներ հայ գեղարվեստական գրականությունից՝

1. Հանկարծ ցնցվեցավ նա և կրկին վեր թռավ պառկած տեղից, *ինքն իրան խոսելով*: (Րաֆֆի, 25)

2. Հայրը ոտքի ելավ՝ *դառնացած կերպով ասելով* ...: (Րաֆֆի, 455)

Բերված օրինակներում ընդգծված բառակապակցությունները, թեև փոքր-ինչ նման են ձևի պարագաներին, այնուամենայնիվ, մեր կարծիքով, դրանց ամբողջովին որպես այդպիսին չի կարելի համարել: Փորձենք հիմնավորել մեր կարծիքը: Ձևի պարագան, ինչպես քաջ հայտնի է, ցույց է տալիս բայ-ստորոգյալի արտահայտած գործողության կատարման ձևը, եղանակը: Սակայն բերված օրինակներում ընդգծված կապակցությունները ոչ թե վերաբերում են բուն ստորոգյալին, այլ պարզապես հաղորդում են նրա արտահայտած գործողությանն ուղեկցող լրացուցիչ ինֆորմացիա: Այսպես, 1-ին օրինակում *ինքն իրան խոսելով* բառակապակցությունը ցույց չի տալիս վեր թռչելու եղանակը. դա որևէ կապ չունի խոսելու գործողության հետ: Նույնը կարելի էր ասել նաև 2-րդ օրինակում բերված *դառնացած կերպով ասելով ասելով* միջուկով կապակցության մասին, որի իմաստային բովանդակությունը սերտորեն կապված չէ *ոտքի ելավ* ստորոգյալի բովանդակության հետ: Այնպես որ ձևի պարագայի և քննվող բառակապակցությունների իմաստների հեռավորության փաստը ակնհայտ է: Այս դեպքում, քնականաբար, հարց է առաջանում. ո՞րն է նման կապակցությունների պարագայական արժեքը, ո՞ր պարագային կարելի է վերագրել այս կապակցությունները: Սույն հոդվածում մենք առաջ ենք քաշում այն տեսակետը, որ նման կապակցությունները, ըստ իրենց իմաստային բովանդակության, դիտվեն որպես ուղեկցման պարագա՝ պարագա, որը չի հիշատակվում հայերենի տեսական և գործնական քերականության աշխատություններում: Ի դեպ, նշենք, որ այդպիսի պարագա ավանդորեն ընդունված է անգլերենում (adverbial of attendant circumstances) [օրինակ, Бархударов, Штелинг, էջ 353, Кобриня, Корнеева, 1986, էջ 83]: Իհարկե, ինչ խոսք, վերջին հանգամանքը խիստ օբյեկտիվ պատճառաբանություն չէ, որի հիման վրա նման պարագա ընդունվի հայերենում, սակայն հարցի բանավիճային լինելը ակնհայտ է:

Ուղեկցման պարագայի իմաստային կողմը առավել ցայտուն դրսևորվում է հետևյալ օրինակներում՝

1. Այս ասելով, Դոլմատովը յուր համար մի բաժակ գինի ածեց և առավ, *սպասելով օրհորդին*: (Շիրվանգադե, 250)

2. Տիկինը, *շարունակելով յուր անսպառ հարցուփորձը*, դարձավ դեպի Սահակը: (Րաֆֆի, 100)

3. -Տես, տես, ինչ են անում մզովվածները,- ասաց նա խորհրդավոր կերպով, *դիտելով Սարթայի խելագար շարժումները*: (Նար-Ղոս, 227)

Քննենք բերված նախադասությունները առանձին-առանձին մեր խնդրոլույսի ներքո: Եթե ելնենք նախադասությունների բայ-ստորոգյալների և ընդգծված բառային իմաստներից, ապա կասկածի ենթակա չէ այն փաստը, որ սույն նախադասություններում ներկայացված են իմաստաբանորեն իրարից լիովին անկախ և տարբեր գործողություններ: Այսպես, 1-ին օրինակում, հերոսը (Դոլմատովը) գրեթե զուգահեռաբար կատարում է երկու գործողություն՝ *գինի ածեց և առավ* մի կողմից և *սպասելով օրհորդին*: Ինքնին հասկանալի է, որ սպասելու գործողությունը չի կարող հանդիսանալ գինի ածելու կամ բաժակ առնելու գործողության կատարման եղանակը կամ թե ձևը: Ի դեպ, նշելի է, որ բայ-ստորոգյալն այս դեպքում արտահայտում է ֆիզիկական բնույթի գործողություն, մինչ դերբայը (սպասելով) արտահայտում է գործողություն, որն ավելի շուտ մոտ է վիճակին:

Նույն եղանակով կարելի է մեկնաբանել 2-րդ և 3-րդ նախադասությունները, որտեղ ներկայացված են երկու գործողություն, որից մեկը տևական բնույթ է կրում (շարունակելով յուր անսպառ հարցուփորձը, դիտելով), իսկ մյուսը՝ միակատար (դարձավ դեպի Սահակը, ասաց): Ասածի հիման վրա միանգամայն պարզ է դառնում, որ դերբայական դարձվածով արտահայտված անդամի պարագայական արժեքը որոշելը երբեմն կախված է այդ դերբայի բուն բառային նշույթից: Վերջինս կարող է փոքր-ինչ շեղել պարագայի իմաստային տեսակը, օրինակ՝ եվ նա, *հարձակվելով օրհորդի վրա*, կամեցավ համբուրել: (Շիրվանգադե, 242)

Ի տարբերություն նախորդ (2-րդ) օրինակի (Տիկինը, *շարունակելով յուր անսպառ հարցուփորձը*, դարձավ դեպի Սահակը), որտեղ պարագան ունի նույն քերականական արտահայտումը, ինչ վերջին պարագան, այնուամենայնիվ

հարծակվելով դերբայի բուն իմաստային կողմը հուշում է, որ վերջինս կատարված գործողություն է, որը նախորդում է բաղադրյալ ստորոգյալի (կամեցավ համբուրել) արտահայտած գործողությանը: Վերջին հանգամանքը խոսում է թերևս այն բանի օգտին, որ *հարծակվելով օրիորդի վրա* կարող է դիտվել նաև որպես ժամանակի պարագա:

Ավելացնենք նաև, որ, ինչպես երևում է վերևում բերված օրինակներից, ուղեկցման պարագան հիմնականում արտահայտված է լինում դերբայական դարձվածներով: Սակայն այն երբեմն կարող է արտահայտվել գոյական բառակապակցություններով, օրինակ ներգոյական հոլովով գոյականական բառակապակցությամբ՝

1. *Սուրճը ձեռքում* նա դանդաղ քայլերով մոտեցավ խմբվածներին: (Շիրվանզադե, 126)

2. Մարթան նստած էր իր փորած գետնի վրա և, *կացիներ ձեռին*, խելագարի անմիտ հայացքով նայում էր ներսը ճխտված կամանց և երեխաների ամբոխին: (Նար-Ղոս, 222)

1-ին նախադասությունում *սուրճը ձեռքում* բառակապակցությունը, մեր կարծիքով, ուղեկցման պարագայի պաշտոնում է հանդես գալիս, թեև առաջին հայացքից այն կարող է ձևի պարագա թվալ: Սակայն, այս կապակցությամբ նպատակահարմար ենք համարում նշել, որ որպես ձևի պարագա այստեղ հանդես է գալիս *դանդաղ քայլերով* բառակապակցությունը, և *սուրճը ձեռքում* բառակապակցությունը հեռանում է ձևի պարագայի իմաստից: Ձևի պարագայի և ուղեկցող հանգամանքների իմաստների հեռանալն առավել ակնհայտ է երկրորդ օրինակում, այն է *կացիներ ձեռին* ուղեկցման պարագայի և *խելագարի անմիտ հայացքով* ձևի պարագայի միջև:

Եվս մեկ հանգամանք, որի վրա կցանկանայինք սևեռել ուշադրությունը: Դերբայական դարձվածով արտահայտած բառակապակցության ուղեկցող հանգամանքների իմաստա-պարագայական արժեքը որոշելիս ելնում ենք նախ և առաջ դարձվածի միջուկային բառի՝ դերբայի իմաստից, որն էլ իր հերթին հանդիսանում է ամբողջ դարձվածի իմաստային միջուկը, իսկ դերբայի լրացումները պարզապես լրացնում են ամբողջ դարձվածի իմաստը: Այնուհանդերձ տրամաբանական է դերբայի բառային արժեքը հարաբերակցել բայ-ստորոգյալի դրսևորած իմաստի հետ, քանզի նախադասության անդամ-

ները «բնութագրվում են նախադասության (որպես ընդհանուր կառուցվածքային միավորի) ու իրար նկատմամբ որոշակի իմաստային հարաբերություններում...» [Ջահուկյան, 1989, էջ 13]: Այսպես, հետևյալ օրինակում

- Որ գողի ես կանգնել, կտամ, ճարս ի՞նչ, - ասաց նա *ծեռքը կոխելով բաճկոնի գրպանը*. (Նար-Ղոս, 235)

ասաց և *կոխելով* բայերը՝ յուրաքանչյուրն իր իմաստաբանական դաշտով պատկանում են տարբեր իմաստաբանական խմբերի: Ըստ այս ընթերցման, *կոխելով* բայածևը չի կարող համարվել *ասաց* դիմավոր բայածևի հատկություն ցույց տվողը: Այն պարզապես ուղեկցում է կամ հաջորդում ասելու գործողությանը: Սա է, որ մեզ հիմք է տալիս *ծեռքը կոխելով բաճկոնի գրպանը* կապակցությունն ընդունել որպես ուղեկցման պարագա:

Կամա թե ակամա, հանգում են այն եզրակացության, որ շարահյուսական պաշտոնի, տվյալ դեպքում պարագայի որոշելը մեծապես պայմանավորվում է պարագայի բառային միավորների բնույթով:

Վերը շարադրածից և բերված օրինակներից պարզ երևում է, որ քննարկվող պարագաները մեծապես տարբերվում են այլ պարագաներից, թեև ուղեկցման պարագայի պաշտոնը որոշելիս հարկ է հաշվի առնել նաև բայ-ստորոգյալի իմաստաբանական բնույթը:

Ամփոփելով ասածը՝ կցանկանայինք ավելացնել, որ ուղեկցման պարագան կարող է դիտվել ինքնուրույն պարագա և իր պատշաճ տեղը գտնել մնացած պարագաների շարքում:

Գրականություն

1. Գ.Բ.Ջահուկյան. Համընդհանուր լեզվաբանական տեսությունը և նախադասության անդամների ուսմունքը, Երևանի համալսարանի բանբեր, 1989, 1 (67):
2. Մ.Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն. - Երևան, Միտք, 1965:
3. Ս.Գ.Աբրահամյան, Ն.Ա.Պառնասյան, Հ.Ա.Օհանյան, Խ.Գ.Բաղդիկյան. Ժամանակակից հայոց լեզու. Հատոր 3., Երևան, ՀԱՍՏ ԳԱ, 1976:
4. Kobrina N.A., Komeeva E.A., Ossovskaya M.I., Guzeeva K.A. An English Grammar. Syntax. - М.: Просвещение, 1986
5. Бархударов Л.С., Штелинг Д.А. Грамматика английского языка. - М.: Высшая школа, 1973.
6. Նար-Ղոս. Մեր թաղը, Սպանված աղավմին. - Եր., Արևիկ, 1989:
7. Շիրվանզադե. Երկեր. - Եր., Սովետ. գրող, 1983:
8. Բաֆֆի. Սամվել. Երկերի ժողովածու, հ. 8. - Եր., «Սովետ. գրող», 1970: